ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2018թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՎԱՄԲ
ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղին անվանակոչել իրավագետ, «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինի փողոց:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2015-2016թթ. Երևանում կայացել են «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» Առաջին և Երկրորդ գլոբալ ֆորումները: Նշված ֆորումները հնարավորություն ընձեռեցին միջազգային քաղաքական ու ակադեմիական հանրության ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության 100-ամյակին և ցեղասպանության հանցագործության կանխարգելման հարցում Հայաստանի հետևողական ջանքերի վրա:

2018թ. դեկտեմբերի 9-11-ը Երևանում անցկացվելու է Ընդդեմ ցեղասպանության հանցագործության Երրորդ գլոբալ ֆորումը, որը նվիրված է լինելու կրթության և գիտության միջոցով ցեղասպանության հանցագործության կանխարգելման հիմնահարցերին: Ֆորումի առաջին նիստը նվիրված է լինելու Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու պատժի մասին կոնվենցիայի 70-ամյակին, որի շրջանակներում մեծարվելու է նաև Կոնվենցիայի նախաձեռնող և «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինի հիշատակը, ով մեծ ավանդ է ունեցել Հայոց ցեղասպանության խնդրի բարձրաձայնման և միջազգային ճանաչման հարցում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացվել է միջնորդություն՝ Ռաֆայել Լեմկինի հիշատակը հավերժացնելու նպատակով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղին կամ Վարդանանց փողոցի փակուղին անվանակոչել նրա անունով:

Համաձայն Երևան քաղաքի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի 08.11.2018թ. հ. 01/1 գրության՝ առաջարկվել է Ռաֆայել Լեմկինի անվամբ անվանակոչել Բաղրամյան պողոտայի 1-ին փակուղին:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրվել է փորձագիտական եզրակացություն, որով որոշման նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ռաֆայել Լեմկինի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ